

# Ի՞ՆՉ Է ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՔԹԻՔԻՆ ԵՒ ԱՆԹԱՐՔԹԻՔԻՆ ՄԻՋԵՒ

Երբեմն մարդիկ կը շուարին այս երկու շրջաններուն միջեւ, որովհետեւ անոնք իրարու շատ նման անուններ ունին: Սակայն, իրականութեան մէջ, անոնք իրարմէ շատ տարբեր շրջաններ են եւ կը գտնուին երկրագունդին վրայ հակառակ ուղղութիւններու վրայ:

ԱՆԹԱՐՔԹԻՔԱՆ աշխարհի ծայրագոյն հարաւը գտնուող ցամաքամասն է: Անիկա բնակավայրն է թելատներու, ընձառիւծփոկերու... եւ հաւանաբար մօտաւորապէս երկու հազար անձերու, որոնք հոն փոխադրուած են աշխատելու համար գիտական կեդրոններու մէջ եւ ուսումնասիրելու աշխարհի ամենէն ցուրտ վայրը:

Մինչ ԱՐՔԹԻՔԸ սառոյցի ովկիանոս մըն է, որ գրեթէ ամբողջովին շրջապատուած է ցամաքով: Հոն օդը նուազ ցուրտ է, քան՝ Անթարքթիքայի մէջ եւ հետեւաբար, աւելի մեղմ՝ թե՛ ցամաքի, թե՛ ալ ծովային անասուններուն համար:

Արքթիքը միակ վայրն է, ուր մենք կըրնանք հանդիպիլ բելեռային արջերու: Սակայն, նոյնիսկ եթէ հոն օդը աւելի մեղմ է, ջերմաստիճանը կը մնայ շատ ցած: Հոն նոյնիսկ ամրան սառոյց կայ:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵԾ՝ ՌԻԹԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՊՈՒՔԵԱՆ  
ՆԿԱՐԱԶԱՐՈՂԵԾ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇԻՇԵԱՆ

# ԿԿՈՒ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



ԹԻՒ 14

ԱՊՐԻԼ Ա. 2018

## ԼՈՅՍ ԱՐՁԱԿՈՂ ԲՈՅՍԵՐ ՏԵՍԱՎԾ ԷՔ

Հազար, շոմին, կաղամբ... մօտ օրէն պիտի դառնան իսկական փոքրիկ լամբեր:

Ամերիկեան Էյ Այ Թի համալսարանէն մասնագետներ կըրցած են կարգ մը բոյսերու յատկութիւնները փոխել, որպէսզի անոնց տերեւները փայլին գիշերը:

Այս բոյսերը ստեղծելու համար մասնագետները գործածած են այն նոյն *մոլեքուլը*, որ լոյս կ'արձակէ գիշերները կարգ մը միջատներու մարմնին մէջէն: Անոնք բոյսերը միւրճած են մասամբ այն *մոլեքուլով* պատրաստուած հեղուկի մը մէջ՝ զայն տերեւներուն մէջ անցընելու համար:

Առաջին փորձերուն ընթացքին անոնք կըրցած են բոյս մը «վառուած» պահել 45 վայրկեան: Այժմ անոնք կրնան այդ լոյսը 4 ժամ վառած պահել: Բոյսերը տակաւին շատ զօրաւոր չեն փայլիր, սակայն մասնագետները տակաւին կ'աշխատին գտնելու համար միջոց մը՝ զանոնք աւելի զօրաւոր եւ աւելի երկար ժամանակ փայլուն պահելու համար:

Այս գիտին նպատակն է կարենալ կարողալ բոյսին լոյսին տակ, կամ իրիկունը պտտիլ լոյս արձակող ծառերով լուսաւորուած քաղաքի մը մէջ: Ապագային մասնագետները կը փափաքին ելեկտրոնականութիւն սպառող բոլոր լոյսերը փոխարինել բոյսերով:

# ՓՈՔՐԻԿ ԼԵՈՆԻ ՓԸԼԻՒՇԷ ՓԱՆՏԱՆ



Փոքրիկ Լեոն Աշուրթի 10 տարեկան մանչուկ մըն է, որ կ'ապրի Լիվորփուլի մէջ, Անգլիա: *Սուփըրմարքեթի* մը մէջ ան կը տեսնէ *փըլիւշէ* փանտա մը: Ան շատ կը կապուի այդ խաղալիքին: Սակայն մայրը չի կրնար գնել անոր ուզածը: Հետեւաբար, վախճալով որ ուրիշ յաճախորդ մը այդ խաղալիքը գնէ, մինչեւ որ իր մայրը կարենայ իրեն գնել այդ *փըլիւշը*: Լեոն երկտող մը կը գրէ թուղթի մը վրայ եւ գայն կը դնէ խաղալիքի տուփին վրայ՝ ուղղուած այն անձերուն, որոնք պիտի փափաքէին գնել *փըլիւշը*: Նամակին մէջ ան կը բացատրէր իր պարագան եւ անոնցմէ կը խնդրէր սպասել խանութ իր վերադարձը ամսուն 15-ին (երբ իր մայրը իր ամսականը կը գանձէր):

*Սուփըրմարքեթի* պաշտօնեաները կը նշմարեն անոր ձգած նամակը եւ կը զգացուին Լեոնի պատմութենէն:

Հետեւաբար անոնք ընկերային ցանցի էջի մը վրայ կը դնեն փանտային տուփին նկարը: Լեոնի մայրը՝ Տեպի կը ճանչնայ *փըլիւշը* եւ իր գաւկին ձեռագիրը: Ան կը կապուի պաշտօնեաներուն հետ:

*Սուփըրմարքեթի* պատասխանատուները կը փափաքին ծանօթանալ փոքրիկ Լեոնի հետ՝ անոր նուիրելու համար իր սիրելի փանտան՝ Փատտին:

Լեոն կը խոստովանի, որ այդ օրը՝ *«իր կեանքին ամենէն զեղեցիկ օրն է»*:



Կրնա՞ս գտնել գլխարկին եւ ձեռնոցներուն հասցնող ճամբան:



Կրնա՞ս գտնել առաջին պատկերին եւ մնացեալ պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող երկու տարբեր մանրամասնութիւնները:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած պատկերասփիւռը աշխատցնող ուլթը գործիքները:



# ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Ի՞ՆՉ ԳԻՏԵՆՔ ՍԿԻՒՈՒՆ ՄԱՍԻՆ

Սկիւռը կրծող, ստնաւոր պզտիկ կենդանի մըն է, որ կ'ապրի Եւրոպայի, Ամերիկայի, Ասիոյ եւ Ափրիկէի անտառներուն մէջ: Ան իր ուտելիքը գտնելէ ետք, իր ժամանակին մեծ մասը կ'անցընէ խաղալով եւ ծառէ ծառ ցատկելով:

## ՀԱՍԱԿ

Սկիւռին հասակը կը հասնի 20 սանթիմէթրի: Պոչին երկայնքն ալ կը հասնի մօտաւորապէս 20 սանթիմէթրի: Ան կենդանիին կը ծառայէ իբրեւ դէկ, երբ ան ծառէ ծառ կը ցատկէ:

## ԿՇԻՈՔ

250-300 կրամ

## ԳՈՅՆ

Մոխրագոյն կամ շէկ գոյնը կախեալ է իր գտնուած շրջաններէն եւ սկիւռի տեսակներէն: Սկիւռի բազմաթիւ տեսակներ կան:

## ԿԵԱՆՔԻ ՏԵՌՂՈՒԹԻՒՆ

Մօտաւորապէս 10 տարի:

## ԲՆԱԿԱԿԱՅՐ

Սկիւռը իր բոյնը կը շինէ ծառի մը բարձր ճիւղերուն վրայ՝ խոտերով, տերեւներով, շիւղերով, մամուռներով եւ կեղեւի կտորներով: Շատ հանգիստ բոյն մըն է, որ երկու մուտք ունի՝ գլխաւոր մուտք մը եւ աւելի պզտիկ մուտք մը՝ վտանգի ժամանակ փախուստ տալու համար:

## ՈՒՏԵԼԻՔ

Խոզկաղին, շագանակ, ընկոյզ, կաղին, վայրի պտուղներ եւ նաեւ կենդանիի հաւկիթներ: Ան ուտելիքը կը բռնէ մատներ ունեցող իր թաթերով (չորս մատ՝ առջեւի թաթերուն վրայ, հինգ մատ՝ ետեւի թաթերուն վրայ): Իր չորս հերձատամները իրեն կարելիութիւնը կու տան դիրուրեամբ կեղեւները կտրելու: Ան ուտելիքները ծակերու մէջ կը պահէ, սակայն կը մոռնայ անոնց տեղերը:

## ԳԻՏԵԻ՞Ր ԹԵ

\* Սկիւռը պզտիկ բթամատ մը ունի, որ գրեթէ անտեսանելի է եւ կ'օգնէ սկիւռին՝ իր ուտելիքը բռնելու համար:

\* Սկիւռին վերի եւ վարի երկու ակռաները շատ շուտ կը բուսնին: Չանոնք մաշեցնելու համար, սկիւռը ստիպուած է գրեթէ միշտ զանոնք իրարու քսելու: Այս պատճառով է, որ ան անդադար կը կրծէ:

\* Իր երկար ճանկերուն շնորհիւ, սկիւռը իր չորս թաթերով կը կառչի ծառերուն եւ կրնայ գլուխը վար՝ գետին իյնալ: Իսկ երբ ան գետնի վրայ է, չի քալեր, այլ՝ կը ցատկաւորէ:

\* Շէկ գոյն ունեցող հասարակ սկիւռը կրնայ 4-5 մէթր ոստումներ ընել մէկ ճիւղէն ուրիշ ճիւղի մը վրայ ցատկելու համար: Սակայն թռչող սկիւռները կրնան սաւառնիլ մինչեւ 100 մէթր:

**ԹԵ ԻՆՉՈՐՒՄ  
ՓՈՔՐԻԿ ԴԱԽԹԻՆ  
ՆԿԱՐԱԾ ԻՇՈՒԿԻՆ  
ԴՈՒՆՉԸ ԿԱՆԱՉ Է**

**ԱՆՅԱԽԱՏԱԼԻ,  
ԲԱՅՑ ԻՐԱԿ...**

Ճերմակ դունչով իշուկը կ'արածեր: Իշուկին դունչը այնքան ալ խոշոր չէր, ձիւնի գնդակի մը չափ, բայց ամուր: Այլապէս, ան ինչպէ՞ս ամբողջ օրը արագ-արագ այդքան խոտ կը պոկէր կը ծամեր...

Իսկ ի՞նչ էր պատճառը, որ այդքան կանաչ խոտ ուտելէ ետք ալ, անոր ճերմակ դունչը չէր կանաչնար:

Դաւիթ օր մը կօշիկները հաներ էր, որպէսզի կանաչներուն վրայ բոպիկ պարեր: Մայրը արգիլէր էր, բարկացեր: Հաւանաբար ան չէր թոյլատրեր Դաւիթին, որ կանաչներուն մէջ բոպիկ քալէ, որպէսզի ոտքերը չկանաչնան: Բայց ինչո՞ւ իշուկին դունչը, որ ամբողջ օրը խոտին կը քսուէր, կանաչ չէր ներկուէր...

Դաւիթը երկար-երկար մտածեց եւ պատասխանը գտաւ, երբ Դաւիթ չ'ուզէր խոտերուն մէջ ոտաբոպիկ վազվզել, նկատեց, որ անոնք դեռ ցօղոտ էին, թաց: Դաւիթ կանգ առաւ եւ դարձեալ զարմանքով սկսաւ հետեւիլ ցօղոտ ու թարմ խոտ արածող իշուկին, որուն դունչը դարձեալ չէր կանաչցեր: Ան նախ մտածեց մէկուն հարցնել, բայց յետոյ որոշեց. «Աւելի լաւ է որ նկարեմ կանաչ դունչով իշուկ մը, որուն դունչը կանաչցեր է թաց խոտ ուտելէն, իսկ սմբակները գունաւոր կը ներկեմ, որովհետեւ դաշտին մէջ գոյնզգոյն ծաղիկներ ալ կան...»:

\* Փիղի մը ուղեղը երկու ամսուան երեխայէ մը աւելի կը կշռէ:  
\* Էյֆել աշտարակը աւելի փոքր կ'երեւի, եթէ մենք քիչ մը դէպի ձախ ծռիկը գայն դիտելու ժամանակ:

\* 31 տարեկան ոճրագործ մը կրցաւ ոստիկաններէն խուսափիլ ամիսներով՝ իբրեւ ծեր մարդ ծպտուելով:

\* Աւստրալիոյ ցամաքամասը առաջ ու ետ կը շարժի՝ ըստ եղանակներուն:

\* Պահամասի շրջանին մէջ գոյութիւն ունի ընձուղտի մը չափ մեծ արձան մը, որ նստած է ովկիանոսին գետնին վրայ:

\* Ուիսքանսըն նահանգին մէջ, Ամերիկա, գողեր գողցած են 9072 քիլօ պանիր:

\* Ֆրանսայի եւ Չուիցերիոյ սահմանին վրայ գտնուող պանդոկի մը մէջ կարելի է քնանալ գլուխը մէկ երկրին, իսկ ոտքերը միւս երկրին մէջ:

\* Շուէտի մէջ բացուած է ամբողջ տարին աշխատող առաջին սառնոցէ պանդոկը:

\* Պոլիվիոյ մէջ գիտնականներ իսկական լիճ մը գտած են հրաբուխի մը տակ:

\* Շատ հին ժամանակներէն տաք տուրմը իբրեւ դեղ գործածուած է:

